


ՏՆՕՐԷՆ-ԽՄԲԱԳԻՐ  
 Ե. ՓՈՐՈՍԵԱՆ  
 ՎԵՏԻ ԵՆՈՂՆԵՆ  
 ՊԵՏՐ ԵՆՈՂՆԵՆ ԱՌ  
 Խմբագր. ԱՐՇԱԼՈՅՍ ԵՐԱՅԻ  
 ԳԱԶԻԲԷ (Հասցեագրիչ)



ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ  
 ԵՒԹՅՈՒՆ ՀԱՄԱՐ  
 Տարեկան, ողջ դահլիճ. 60  
 Վեցամսեայ » 35  
 ՕՏԱՐ ԵՐԿՈՒՆԵՐ  
 Տարեկան Ցրանք 20  
 Վեցամսեայ » 12

Rédaction du journal arménien  
**ARCHALOUICE**  
 HABBANIAN LE CAIRE (ÉGYPTÉ)

ԼՐԱԳԻՐ  
 ԱՉԳԱՅԻՆ, ԳՐԱԿԱՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒ ԿԱՆԽԿ Է  
 ԵՒ ԹՂԹՍԱՐԻ ԾԱԽՔԸ  
 Խմբագրութեան վրայ:  
 Խմբագրութեան ուղղուած  
 գրութիւնք ԵՍ ՀՆԵՆ ՏՐՈՒՐ:

ԿԸ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԻ ՉՈՐԵՔՇԱԲԹԻ ԵՒ ՇԱՐԱՔ ՕՐԵՐԸ

ԱՆԳՂԻԱ ԵՒ ԱՄԵՐԻԿԱ

Ա.

Հարաւ-Ամերիկէի մէջ սեղի ունեցած  
 հանգաւորները պատերազմը չ'է որ այսօր  
 ամբողջ Եւրոպայի ուղարկութիւնը իւր վրայ  
 գրաւած է: Պօէրական ցամաքներուն՝ պա-  
 տերազմի դաշտին վրայ, երբ որ առաջին  
 անգամ թնդանօթներուն պայթումը լուռ-  
 ցած՝ ամբողջ քաղաքական աշխարհին վրայէն  
 պազ սարսուռ մ'անցաւ:

Չարին բերանը եղող «նովոյէ Վրէմիա»  
 թերթը ահագնադողորդ հառաչով մը գո-  
 ռաց որ այդ պատերազմը, այն հանգոյցին  
 քակումն է՝ որ ամբողջ աշխարհի մեծ մեծ  
 վտանգներ կ'սպառնայ և եթէ այդ յա-  
 ռաջխաղացումը Անգլիոյ յաղթութեամբ պը-  
 սակուի, 800 հ չափ ահագին ու վիթխարի  
 տարմիղով մը, միահեծան տէր ըլլալով աշ-  
 խարհիս շոճերուն, պիտի ջանայ իւր ցա-  
 մաքային զօրութիւնն ալ անկեցնել կամ  
 միւս Եւրոպական պետութեանց համակշիռ  
 զօրաց թիւ մը պահել, որով աշխարհիս  
 ինքնակալութեան, անգլիական վարչմի  
 վարդապետութեան (doctrine) նախաքարն  
 դնել:

Եւ կը յաւելու. « Մենք այս օրուրնէ  
 սկսելու ենք ահեղ նաւատորմիդ մը կնքմել,  
 ամեն ճիգով, դրամով, եթէ կարելի է՝  
 մեր բոլոր հարստութեանց աղբիւրներուն  
 փճացումովը, գոնէ հաւասար զօրութիւն մը  
 Անգլիոյ ծովային զօրութեան: Միւս թեր-  
 թերը վերապահութեամբ հաստատեցին  
 այս լուրը, իսկ ոմանք անտարբերութեամբ  
 կամ փութկոտութեամբ մը անցան:

Սակայն իրականութիւնն ահագին էր  
 ու ամբողջ բովանդակութիւն կարելիութեան  
 ընդարձակ սահմանին մէջ:

Այս օրուան պատերազմը չնմանիր  
 Սպանո-Ամերիկեան պատերազմին: Իրօք մեծ  
 մեծ խառնաշփոթութիւններ բերին քաղա-  
 քական կրկէսին. սակայն հեռու եւրոպա-  
 կան երկիրներէ, ծովու մէջտեղ մի քանի  
 կղզիներու վրայ էր որ կը մղուէր պատե-  
 րազմը յանուն արդարութեան և ազատու-  
 թեան:

Մանիլայի ծովածոցին մէջ, ծովակալ  
 Տուէյի Սպանիոյ ահեղ տորմիդին ջախջա-  
 խումը, այնչափ ահաւոր իրարանցում չպատ-

ճառեց, քան այս օրուան Ladysmith ի  
 գրաւման կամ գրաւուելու կարելիութեան  
 լուրը:

Փիլիպպեան կղզիներուն մէջ այսօր տա-  
 կաւին ապստամբութիւնը կը տիրէ, սակայն  
 այդ կղզեաց ամբողջին գրաւումը, այնչափ  
 մեծ ազդեցութիւն չպիտի ընէ, քաղա-  
 քականապէս յաջ եւրոպայի՝ քան Orangeի  
 կամ շրջակայ գաւառաց չարաչար պար-  
 տութիւնը Անգլիական բանակէն. կէտ մը՝  
 որ ահագին կարեորութիւն ունի ապագային  
 Անգլիոյ յառաջխաղացման: Միթէ քաղա-  
 քական պատրուակ մը չէ՞ որ այսօր Ամե-  
 րիկա նոր բանակներու կազմակերպութեամբ  
 չ'որոշեր իր կիսատ պատերազմը ի գլուխ  
 հանել, Փիլիպպեան կղզեաց մէջ, մահացու  
 հարուած մը տալով Ալիւնալտոի զօրապե-  
 տաց ու զօրագնդաց: Բնական է ու իրա-  
 կանութեան չափ պայծառ:

Ամերիկա իւր գէտ շուրհի այսօր Սպա-  
 նիական ահեղ գուռներ կամ Գէրվերա-  
 ներու Վիսքոնսին նաւատորմիդներ, այլ  
 կղզեանեալ զրահաւորներ ու յուսահատ  
 զինուորներ: Այժմու Ամերիկայի բռնած  
 դիրքը հանդէպ Փիլիպպեանց սոսկ քաղա-  
 քական պատրուակ մը, ենթոյի մը կամ  
 խաբէբայութիւն մ'է. ահագին բլաններ  
 կազմուած են Մաքքիլիի ճերմակ տան  
 դահլիճին մէջ՝ որոց իրականութիւնը լրիկ  
 մեջիկ ապագային վերապահում են:

Ժամանակին երբ Ամերիկա-Սպան պա-  
 տերազմը իր յառաջաքանին մէջն էր՝ լրա-  
 գրաց մէջ հարեանցի գրոյցներ եղաւ Անկլո-  
 Սաքսոն ցեղերու միացումը, անքակտելի  
 կերպով: Մեծ յուզում յառաջ բերաւ քա-  
 ղաքականապէս. խօսուեցաւ Ամերիկա-Անգ-  
 լիական զինակցութեան վրայ՝ որ բովան-  
 դակ աշխարհի սարսուռ ազդեց:

Եւրոպայի հինգ մեծ պետութեանց  
 ներկայ Հարաւ-Ամերիկէի պատերազմին առ-  
 թիւ Անգլիոյ ահագին հակառակութեան և  
 թշնամութեան տակ այդ իտէսիս իրակա-  
 նացումն է՝ որ թագուն պահուած է: Ամբողջ  
 Եւրոպա քալ ըմբռնած է թէ այդ միասէր  
 ու միալեզու զօրութեանց ի մի ձուլումը, շատ  
 վտանգաւոր հետեանքներ կ'ունենայամբողջ  
 Եւրոպայի գոյութեան: Պատերազմը չէ՞ այլ  
 հարկը ու պահանջն է որ կը մղէ այդ երկու  
 ցեղերուն միացումը:

Քաղաքականութիւնը կամ աշխարհա-

վարութիւնը միայն յատուկ է Անգլիական  
 ցեղին, որ միակ զարգացեալ ու զօրութեան  
 տարրը կը կազմէ երկրագնդիս վրայ: Գիտեն  
 Անգլիացի դիւանագէտներ լուրերու պրպը-  
 տումը ու յաղթութեանց ժամանակամի-  
 շոցները: Ամբողջ Եւրոպա ըմբռնած է որ  
 Անգլիա Ամերիկայի թշնամին է պատմու-  
 թեամբ ու ներկայ պարագաներով. ատով  
 միայն անխուստիբին պարտկել կ'ուզեն ու  
 քնացնել ժողովրդական տարրը:

Պատմութեամբ և ազգով մէկ էին այդ  
 երկու ցեղերը, ժամանակին, անզարգակ  
 ժամանակամիջոցներուն մէջ, «Հարկ լուծէ  
 զօրէնս» հակումով մին միւսէն բաժնուեցաւ,  
 աշխարհ որոնելու, գտնալու ուռճացնելու,  
 զարգացնելու ու քաղաքակրթութեան ու լու-  
 սավառութեան առաջին վառարանն ըլլալու  
 աշխարհիս հանդէպ:

Անկարելի է այդ երկու ցեղերուն իրար-  
 մէ բաժանումը: Անգլիա հարստութեամբ և  
 այլազան գաղութներով 800 միլիոն ժո-  
 ղովրդեան կառավարն է, ու այնպիսի քա-  
 ղաքականութեամբ մը կը կառավարէ, որ  
 պառակտումներ, ճգտումներ անպակաս են.  
 սակայն այդ քաղաքականութեան վիթխարի  
 մեքենայութեամբ է որ իր աշխարհագրա-  
 ւումները կը կառարէ, ու տակաւին էնթ-  
 ռիքներու ահագին ծրարներ կը պարունակէ:

Մինչև ցարդ միայն Անգլիան է որ այդ  
 քաղաքականութեամբ իւր երկիրները աւելի  
 ընդարձակած է քան միւս տէրութիւններ՝  
 որով ամենէն հարուստ մեծամեծ ոսկոյ  
 հանքերու տէր ու այլազան հարստութեանց  
 մթերանոցներու պաշարներ իւր ծովածաւալ  
 երկիրներուն մէջ ունի: Անգլիական Տիտոնին  
 ճակատը իշխանութեան, թագունը զօրու-  
 թեան մը կամ պաղարիւնութեան ցուլու մը  
 կը պատկերանայ: Ամեն անհատ քաղաքա-  
 կան ամեն միջադէպ ուղի ուղով, վերլու-  
 ճութեամբ կ'ընթեռնու՝ քան ֆրանսական  
 թեթեւալիկութեամբ մը միւս ցեղերուն  
 յատուկ: Անգլիոյ յառաջխաղացման ճակա-  
 տագրին պայծառացման նշոյնները Պօէրա-  
 կան յաջող արշաւանքին մէջ կը կայանայ՝  
 որմէ կախում ունի Անգլո-Ամերիկա՛յի դաշ-  
 նակցութեան գոյութիւնը կամ հաստատու-  
 թիւնը:

Թէպէտև վճռուած ու անփոփոխ նի-  
 ղակակցութեան մը հիմերը դրուած ու  
 կարգադրուած են: Կայ մը առանց նմա-  
 նելու երբեակ նիղակակցութեան կամ մրան-

քո-Ռուսական, յարաբերութեանց, Անգլիական օր ռայքը շնչանակեր ինչ որ Գաղղիական քառօղ ռոմեօրը: Ապագան սղեորութիւնն էր և ոգևորքներ պիտի ունենայ: Աչալուրջ սպասենք առ այդ: Այդ նիզակակցութեան կատարելագործումը ահագին յեղաշրջումներ պիտի բերէ: Եւրոպա ակնդէտ կ'սպասէ: Յաջորդ յօդուածով մը պիտի պատճառաբանեմ թէ Եւրոպայի միւս ցամաքային մեծ պետութիւնները ի՞նչ դիրք պիտի բռնեն կամ բռնած են այդ կարելիութեան հանդէպ:

Ներկայ յօդուածի պարունակութեանց մէկ մասին համարիտ չ'ըլլալով հանդերձ, ՚ի յարգանս մեր յօդուածագրին կը հրատարակենք. վերապահելով այս մասին մեր կարծիքներն, յարմար առթիւ մը յայտնելու համար:

**ՕՐՈՒԱՆ ՀԱՐՅԵՐ**

Ա.

**ԿՕՇԻԿԷՆ ՎԵՐ**

Մի քանի հայ թերթեր յազմուելով խօսեցան ամուսնութեան մը վրայ, որ վերջերս կատարուեցաւ թրքաց մայրաքաղաքին մէջ, հայ կաթողիկ կղերին միջոցաւ. ամուսնութիւն՝ զոր անվաւեր կը նկատէ եղեր Պօլսոյ պայպական նուիրակը, սա պատճառաւ որ պատկեալներուն ծնողքը՝ թէև Հայ-կաթողիկ՝ Լատին արձանագրուած են եղեր եւ՝ հետեւաբար՝ պէտք է եղեր որ Լատին եկեղեցւոյ միջոցաւ, լատինական արարողութեամբ ամուսնանան:

Անշուշտ ցաւալի է որ անջպիտի անհամ վէճեր սեղի ունենան երկու եկեղեցիներու պաշտօնեաներուն մէջ, որոնք միեւնոյն պետին ստիճակը կը խնային: Բայց եւ այնպէս մինք ուրիշ բան չենք տեսներ այս խնդրոյ մէջ, բայց միայն իրաւասութեան հարց մը: Այլապէս ըսելով՝ հայի խնդիր մը, որ հարգուող է և նոյն իսկ միեւնոյն թաղին եկեղեցւոյն քահանաներուն մէջ: Հետեւաբար չ'արժեր այնքան ազմուել յարուցանել այս մասին մանաւանդ եթէ խորհիք որ Աստուծոյ այդ պաշտօնեաներն ալ՝ ամենամեծէն մինչեւ ամենամիտքը, եւ շատ աննշմարելի բացասութեամբ՝ անշտանդարտութեան եւ անձնութեան ոգին բողոքովին չեն իւրացուցած, եւ շատերն ալ միզ նման պարզ մահկանացուներէ խիստ շատ առաջ դառնած են այդ տեսակէտներով:

Ուստի անցնինք, եւ մեր ուշք գարձենք այն յանկարծական յեղաշրջման վրայ, զոր Պապը կ'ընէ եկեղեցական կանոններուն մէջ, թոյլ տալով որ կղերը ամուսնանայ:

Այս մասին գրած է «Բիւզանդիոն» որմէ արտատարած է «Արշալոյս» եւ՝ կը կարծենք՝ «Իրաւունք» հրատարակելով նաեւ մի քանի արտատարութիւնը Մաւ-Աբաբի: Ուստի մենք չպիտի կրկնենք արդէն տրուած մանրամասնութիւնները. բայց թէ՛ «Բիւզանդիոն»ն եւ թէ՛ Եւրոպական թերթերէ խիստ փոքր քաղուած մը պիտի ընենք:

«Եկեղեցւոյ կանոնները, կ'ըսեն Լատինեղեակ երկու թերթեր (Le Figaro եւ Le Temps) միջազգային պահանջմանց հետ համաձայնեցնելու նպատակաւ... եւ միւս կողմէն ալ նկատելով թէ եկեղեցականաց ամուսնութիւնը Աստուածազիր օրէնք մը չէ, այլ չ... Պապերու եւ ժողովներու միջոցաւ գրուած պարզ կանոն մ'է, կ'ըսուի թէ՛ Ս. Պապը Հարա-Ամերիկայի լատին քահանաներուն կը թողարտէ ամուսնանալ...» Պատճառ. «Այն կողմերը բողոքականութեան ծաւալման առջեւ թուժա մը կանգնելու համար»:

Որպէսզի ընթերցողը լաւ հասկնայ թէ ո՞ր աստիճան անկանելի հակասութեան մէջ կ'իյնան քրիստոնէութեան բոլոր պետերը Պապական այդ

ձեռնարկով, հարկ կ'զգանք մի քիչ վերլուծելու վերոյգրեալ մասերը:

Եկեղեցւոյ կանոնները, վիզալայից պահանջմանց հետ համաձայնեցնելու նպատակաւ... Սովորով քրիստոնեայ աշխարհ կ'ընդունի եւ կը հաւատայ թէ եկեղեցին հաստատութիւն մ'է Աստուածային՝ որուն գլուխն է Աստուածորդին: Գիտենք նաեւ որ Բրիտոսոս անկղլի է՝ ինչպէս իր Հայքը, եւ՝ հետեւաբար՝ իր գրած օրէնք եւ կանոններն ալ պէտք է ըլլան անթերի եւ գերծ ո՞ր եւէ փոփոխուած: Արդ եթէ բարեփոխութիւն մը հարկ է աշխարհային կամ եկեղեցական կանոններուն մէջ, որպէսզի այս երկուքը համաձայն իրարու հետ, պէտք է համակերպի այն, որ ենթակայ է փոփոխուելու: Ըլլալով պոռու յեղեղակ մարդկութեան: Հակասակն ընել, այսինքն եկեղեցական կարգ ու կանոնը նպատակեցնել միջազգային պահանջմանց, պիտի յանգի սա նորութեան որ ամեն քաղաք, եւ թերեւս ամեն տուն, իւրաքանչիւր անհատ իր պահանջումին համեմատ եկեղեցական կարգ ու կանոն մը պիտի ունենայ. բան մը որ խիստ հետո է «մի եկեղեցի եւ մի գլուխ» խօսքերէն:

Բայց պիտի ըսուի. այսպիսի ալլանդակ եւ հակաքրիստոնեայ պատճառաբանութիւններ արդէն նախատեսուած են, եւ ահա ձեռք անոնց սեղի չտալու համար արուած է սա բացատրութիւնը թէ՛

«Եւ միւս կողմէն ալ նկատելով թէ եկեղեցականաց ամուսնութիւնը Աստուածազիր օրէնք մը չէ, այլ... Պապերու եւ ժողովներու միջոցաւ գրուած պարզ կանոն մ'է...»

Արդարեւ արդարացում մ'է սա, բայց այն տեսակէն որուն համար իրաւամբ կրնանք ըսել՝ «յառաջ բերուած չբնորոշանքը աւելի դատապարտելի է քան գործուած յանցանքը» (Եղբրու գապահանքն ստանալէ):

Ինչպէս տեսանք Եկեղեցին Աստուծոյ ձիայն կը վերաբերի, եւ պէտք է որ անոր կարգ ու կատարութիւնն ալ Աստուծոյ ցոյց տուած եւ զանակով ըլլայ, ո՞չ աւելի, ո՞չ պակաս: Այլապէս խորհիլ եւ գործել յաւակնիլ է աւելի խնայողութեան քան Աստուծոյն. Աստուծոյ կրնանք ենթադրել որ Ամենագէտն, Այն որ սկիզբէն կը նախատեսէ ամեն բանին վախճանը, հարկաւ կարիւր եղած հրահանգները առած է իր Հաստատութեան անեղծ պահպանման համար: Եւ եթէ ինչ պաշտօնէից ամուսնի մնալը չ'պատուիրէն հետո ընդհակառակն վճռած է որ Այն է բարոյք մարդոյ միայն լինել. արարողքը դժաւ սքնական ըստ դժա» (1), հարկաւ այն անունէն Պատմութեան էր քննութեան այն պահանջութիւնը, որոնք այսօր կ'ստիպեն ինքնակոչ անխալ Պապ մը եղծանել ինչ որ նմանապէս անխալ Պապեր պատշաճ դասած էին: Ներմուծելու եկեղեցւոյ մէջ, եւ այս իրարու ներհակ որոշումները անջատող քաղմաթիւ գարեբու շարքին մէջ ի՞նչ եղած է ամուսնի եկեղեցականաց կիսնքը, անշուշտ ինչ որ պիտի չպարունակէ ըլլալ, եթէ Լեւոն ԺԳ. քահանայապետը չ'ընդհանրացնէ իր այս վերահաստատման սրտամարտութիւնը. կենցաղ Գոմորային: Ուրեմն թող ներուի մեզ ըսելու որ Պապերը եւ ժողովները ուզելով իրենց յաւակնութեամբ բարեփոխել Ս. Բարիքին օրէնքը, ուրիշ խօսքով՝ ուզելով կոչիկէն վեր ելլել, պարզապէս ըմբոստեցան Անոր դէմ, եկեղեցին պղծեցին եւ թերահաւատութեան ձեռք գէնք վ'աւելի տոնին:

Տեղն է կարծեմ հեղեակ պատուութեան: Եթէ լատին կղերը իր ամուսնութիւնը կը պարտի Պապական ոտնձգութեանց Աստուածային հողին վրայ, Հայաստանեայց Եկեղեցին որո՞ւ հրոսմանաւ կը հետեւի այս հակաքրիստոնեական օրէնքին: Մի գուցէ Հոսովայ քահանայապետին գերիշխանութիւնը խօսքով մերթելով հանդերձ գործով ընդունինք: Մանրակշիռ ինդիր մ'ալ այս է որ մեք ինչպէս պիտի կրնանք վստահ ըլլալ թէ այն կանոններուն մէջ, զոր մեզի կը ներկայացնեն իբրեւ եկեղեցական, հետեւաբար իբրեւ Հիմնադրին կամաց համապատասխանող կանոններ, չկան ուրիշներ ալ որոնց վաղ կամ անազան փոփոխման պէտքը պիտի զգացուի միջազգային պահանջմանց»

(1) Առաքելական հրահանգները զանգ կ'ընենք առ այժմ:

գրեացում, տալու համար, եւ կամ այնպիսիներ որոնք պարզ մանկամտացուներու ձեռքով ներմուծուած են միեւնոյն պատճառներով: «Միջազգային պահանջման» շատ ջուր կը վերցնեն այս երկու բառերը:

Փափաքելի է նաեւ միանգամ ընդ միշտ գիտնալ թէ որո՞նք են յանցապարտ. մեր հնազարեան վարդապետներն ու հայրնապետները, որոնց անունները կը տեսնենք սրբոց շարքին մէջ, եւ որոնք կ'ամուսնանային ըստ Աստուածային թոյլտուութեան, եւ նախ իրենց ընտանիքը կատարելով կը սորվէին հովուել իրենց հսկողութեան յանձնուած հօտը. թէ անոնց յաջորդները, սրոնք կը հպատակին պարզապէս մարդկային օրինաց, եւ կը յաւակնին առայնորդի ժողովուրդի մը որուն ներքին հոգն ու վիշտը կ'անդիտեն:

Ամենէն աւելի ձեզի կ'ուզենք այս հարցումը, ո՞վ ժողովուրդին հոգեւոր բերիչները, պատասխանեցէք մեզի, լուսաւորեցէք մեզ նման կոյր պաշտները՝ ըսէք, Աստուած զո՞վ պիտի պատժէ, եւ որո՞նք են արժանի Աստուծոյ պաշտօնեայ կոչուելու. Անոր կամաց հնազանդողները, թէ Անոր իմաստութիւնն ու նախախնամութիւնը քննադատելու եւ կատարելագործելու յաւակնող մեծամիտները:

Առիթ պիտի ունենանք ընկերական տեսակէտով ալ շննելու այս խնդիրը: Գրեցիք 2 Փետրվ. 1900

**ՆԵՐՔԻՆ ԼՈՒԻՇԵՐ**

Թրանսլալի պատերազմին դճեղուն համար յեղ իւրոսս բացուած հանգանակութեանց երկրորդ վճարմանը առթիւ՝ Լուիսոնի Լորտ քաղաքապետը հետեւեալ նամակը ձեղղած է Լորտ Բրոքլին:

Միջոց, Մեծաւ հաճութեամբ ստացայ թրանսլալի պատերազմին համար յեղ իւրոսս բացուած հանգանակութեանց գումարէն կրկնորդ վճարումը՝ որ կը բարձրանայ 1625/1675 անգլ. սոկի. Ամենամեծ գոհունակութեամբ կը տեսնեմ Հեղին եւ Խոտլիոյ հպատակաց աշակցութիւնը, որք այս առթիւ կը քիտանան Նորին Վեհափառութեան հպատակացը՝ այս բարեփոխական քրիստոնեայական համարը Ուրախ պիտի լինեմ ի՞նչ ձեր բարձրութիւնը, ուրէ առիթ է մը օգտուելով կարենար հաղորդել իմ նսկեղծ եւ սրտապին շնորհակալքն հանքատակութեան մասնակցողաց:

Գեղապետ մաթիհի պէյ Խարթիւնի հրամանատար անուանուեցաւ:

Լուիսոնէ կ'իմացունեն թէ՛ Բրոքլին. ահա Մարտ Միջոցերի առաջական վիճակը զգալի կ'ըլլալէ կը բարձրի Կ'ըրեի թէ այս վեքիին օրերս տարածուած վրդովիչ գրոյցները ս. ե. է ըսել հիմ. մը չունին: Եթէ գիտնական Բրոքլին ստուր կ'ընդհակալ վերջաւայէն առաջ ամբողջովին ապրքիւնի, հաւանականաբարց Եղիպտոս դայ մի քանի շաբաթներ մնալու համար, ինչպէս սովէն տարի կ'ընէ:

**ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒԻՇԵՐ**

Պետիւնէ քաշուած հեռապիլ մը կ'ընէ թէ՛ Պետական ժողովը կրնան է նաեւ տարմիլին յաւելման ճշգրտորը, զոր կայանքական կառավարութիւնը ներկայացուցած է: Պետական ժողովը 769 միլիոնի փոխառութիւնը սկզբամբ ընդունած է՝ ծախուց մեծ մասին դէմ գնելու և նորանոր տրոց դիմելու հարկէն խոյս տալու համար: Նոյնպէս հաւանած է ժողովին նախարարութեան կողմանէ պատրաստուած նալային շինու-

### ՀՐԱԻՔ ԱՌ ԱՆԴԱՍՏ

ՎԱՍՊՊՈՒՐԱԿԱՆԻ ՈՐՐԱԽՆԱՄ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ

Վասպուրականի Որբախնամ Ընկերութեանս Գործադիր Ժողովը պատու ունի հրահրել Ձեզ, որ հաճիք ներկայ գտնուել Որբախնամ Ընկերութեան Գործադիր Ժողովին, որ տեղի պիտի ունենայ յառաջիկայ կիրակէ, 11 Փետրվ. յետ միջօրէի ժամը ճիշդ Յին, Ս. Եկեղեցւոյ կից մանկապարտէզի սրահին մէջ:

ԺՈՂՈՎՈՅ ՕՐՈՒԿԱՐԳ

1. Որբախնամ կանոնադրի վերաքննութիւն.
2. Գործադիր Ժողովոյ եօթամսեայ համարաւուութիւն.
3. Ընտրութիւն Ընդհ. Ժողովոյ Դիւանի.
4. Հրատարական Գործ. Ժողովոյ եւ նորի ընտրութիւն:

Ի գիմաց Գործադիր Ժողովոյ Վասպուրականի Որբախնամ Ընկերութեան Ատենադպիր Ատենապետ Լ. Ա. ԲԱՍՊՊՈՒՐԱԿԱՆ Գ. ԻՍԱԳՈՒԼԵԱՆ

### Հ Ե Ռ Ա Ք Ի Ր

ԲԱՐԻՉ 2 Փետրվ.

«Թան»ի Լոնտոնի թղթակցին գրածին նայելով, Լորտ Բոպրդս 90,000 հոգիի օգնական զօրք խնդրած է:

ԼՈՆՏՈՆ 2 Փետրվ.

Զօրավար Պուլլերի շարժմանց մասին ունէ լուր ստացուած չէ:

ՔԱԲ 2 Փետրվ.

Եօթներորդ զօրաբանի հրամանատար զօրավար Թըրքըր Մըտտըր Բիլլըր մեկնեցաւ:

### ԵՒՐՈՊԱԿԱՆ ԹՂԹԱԲԵՐ

ԵՒՐՈՊԱԿԱՆ ԸՆՏՐՈՒԹԻՒՆՔ

Մեր անցեալ թղթակցութեանց մէկուն մէջ խօսեցանք, անցողակի կերպով, Եւրոպական ընտրութեան վրայ, որ տեղի ունենալու էր յունուար ամսուան մէջ, երեկ տեղի ունեցաւ այդ ընտրութիւնն: Նոր ընտրութիւնը գնահատելու համար, պէտք չէ կանդ առնուլ քանի մը մասնաւոր յօդուրութեանց եւ մի քանի անյաշողութեանց վրայ, վասն զի տեղական խնդիրներն մեծ գեր կրնան խաղալ ընտրութեանց մէջ: Հարկաւոր է զայն իւր ամբողջութեամբը առնել եւ գումարել հասարակապետական զանազան կուսակցութեանց տարած յալ-թուրութիւնն, այս կերպով կը տեսնուի թէ Լիւքսեմպուրկի պալատին մէջ փոփոխութիւն մը չկայ գրեթէ:

Թեանց ծրագրոյն. ըստ այդ ծրագրի՝ արդի նաւատորմիդին չափ զօրաւոր երկրորդ նաւատորմիդ մը պիտի շինուի, ինչպէս նաև վեց մեծ եւ եօթն փոքր յածաւորակներ:

Թէ՛ գործօն եւ թէ՛ պահեստի նաւատորմիդները պիտի կազմուին երկերկու նաւախումբերէ: Իւրաքանչիւր նաւախումբ պիտի բաղկանայ նաւային գումարտակէ, երկու մեծ եւ ութ փոքր լրտեսող-յեծաւորակներէ՝ գերմանական ջուրց ծառայութեանը համար, եւ հինգ մեծ ու հինգ փոքր յեծաւորակներէ՝ օտար ջուրց ծառայութեանը համար: Մրազըրուած այս նաւային շինութիւնը մինչև 1916 պիտի աւարտին:

### ՀՈՒԱՆՏԱ

Մայիս 29ին նոր դեսպանաժողով մը տեղի պիտի ունենայ ի Լահէ միջազգային անհատական օրինաց վերայ: Անհատական միջազգային օրինաց վերայ պետական յանձնաժողովին մէկ նիստին, որ 20 ին տեղի ունեցաւ Պարիսի նախարարութեան մէջ Պ. Ասէրի նախագահութեան ներքեւ, ուսումնասիրած են Գաղղիական եւ Պելժ կառավարութեանց կողմանէ դրկուած ծանօթագիրները ի մասին յառաջիկայ դեսպանաժողովոյն մէջ վիճելի ծրագրոյն:

### ՌՈՒՍԻԱ

Ս. Բեդերսպուրկէ կը հեռագրեն թէ՛ կոմս Լէօն Թոյթօյի առողջութիւնը այժմ այնքան վերահաստատուած է՝ որ կեանքին սովորական ընթացքը վերստացած է: Կըրնայ աշխատիլ եւ հետիոտն երկար պտոյտներ ընել: Իւր վերջին հիւանդութեան խոնջանք մը միայն մնացած է: Կոմսը նոյն իսկ մտադրութիւն ունի ելլել ուսական ժողովրդային կեանքի հետ կապ ունեցող գրական նոր աշխատութեան մը ձեռնարկելու:

Կեդրոնական Ասիոյ մէջ Աֆղանիստանի չըջակալքը ուս զինուորանոցներուն զօրաց իսկական թիւը 70,000 հոգին կ'անցնի: Այս զինուորանոցներուն սպայները՝ որք արտօնութեամբ կամ պաշտօնով հեռի կը գտնուէին՝ հրաման ստացած են անյապաղ իրենց պաշտօնին գլուխը անցնելու: Նորանոր Ռուս զօրագնդեր անդադար Օտտոսայէ կեդրոնական Ասիա կը զրկուին: Երբէք սոյնօրինակ շարժում մը տեսնուած չ'էր կատարեալ ձմրան մէջ: Ռուս կառավարութեան հաւաստիքը անկարելի է համաձայնեցնել իրողութեանցը հետ:

Շատ մը գաւառներու մէջ, հասարակապետականները իրենց յաղթանակը կը պարսին իրենց միութեան եւ հասկացողութեան: հասարակապետականներն իրենց գրոշակին վրայ կրնան գրել միտքի ընդհանուր Բաց ի վանտէ գաւառէն եւ ոչ մէկ տեղ թիկնած ունենր ներկայացած են առանց հասարակապետական տիրողոսին:

Վերջին ժամանակներու ս կուսակցական կուռներէն յետոյ, որոնք հազիւ Քրանսացուց մտքէն ելլելու վրայ են, Պրանսան անգամ մ'ալ հաստատեց թէ վստահութիւն ունի այն ռէժիմին վրայ որ մէկ քառորդ գարէ ի վեր կը վարէ երկրին գործերը:

Սէն նահանգին ընտրեալներն են՝ ՊՊ. Թիւրիլիէ՝ արմատական-ընկերվարական, Տը Պրէյսինէ՝ հասարակապետական, Փուառիէ՝ հասարակապետական, Մթրօս՝ արմատական, Տօք. Փիէթր՝ արմատական, Լըֆէվը՝ արմատական-ընկերվարական, որոնք ամէնքն ալ արդէն առաջ ձեռնադրուի անգամներ էին եւ կրկին ընտրուեցան:

Ինչ որ հետաքրքիր է նկատելը, այն է թէ ՊՊ. Ռանգ, Սիկֆրիտ եւ Թըլլընէ չ'ընտրուեցան այս անգամ, ասոնց առաջինը մեծ գեր խաղաց իրրե Տրէյֆիւսական եւ արմատական, իսկ վերջին երկուքը նախկին մինիստրներ են. ընդհակառակը Մէրսիէի, Լամպէռի եւ Ժարիի նման զօրավարներ, որոնք ազգայնական կուսակցութիւնն կը ներկայացնեն՝ ընտրուած են:

### ԵՒՐՈՊԱԿԱՆ ԲՆԱԿԻՉՆԵՐՆ

Գերմանացի բրօքէտէօր մը Սուպաու Supau վերջին օրերս Եւրոպայի Ժողովրդաց վրայ աշխարհահամար մը հրատարակած է: Ըստ այդ հեղինակին Եւրոպայի այժմեան բոլոր բնակիչներն, կըր թուուլ, 381 միլիոն են, մինչ 1870ին ամբողջ Ժողովրդըրը այդ թուէն 79 միլիոն պակաս էր: Նուրբ մասին մօտ 3 միլիոն կ'աւելնայ եղեր Եւրոպայի Ժողովրդըր:

Խտութեան տեսակէտով՝ մէկ քառակուսի քիլօմէթրի մէջ 39 բնակիչ կայ: Իսկ եթէ մասնաւոր խտութեան գանք Պիլճիա 224 բնակիչ ունի մէկ քառակուսի քիլօմէթրի համար, Ստորին Նահանգները՝ 132. Բրիտանական կղզիներն՝ 127, Իտալիա՝ 111. Գերմանիոյ Կայսրութիւնը՝ 97, Զուիցերիա՝ 76, Ֆրանսա՝ 71, Տանըմարքա՝ 58 եւն, իսկ Ռուսիա՝ 31, Շուէտ՝ 11 եւ Նորվիգիա՝ միայն 6:

## ԼԱ ՄԻՉՈՒՄԱԼ ԼԱՅՑ

Կ Ե Ն Ա Յ Ա Պ Ա Հ Ո Վ Ա Ք Ի Ր Ա Կ Ա Ն Ը Ն Կ Ե Ր ՈՒ Թ Ի Ի Ն

ԱԾԽԱՐՅԻ ԱՄԵՆԵՆ ՀԱՐՈՒՍՏԸ ԵՒ ԿԱՐԵՒՈՐԸ

ԵՐԱՇԽԱՒՈՐԵԱԼ ԴՐԱՄԱԳԼՈՒԽ Ի ՄԻԼԻԱՐ 437 ՄԻԼԻՈՆ

Ապահովագրեալներուն կը բաժնէ ամենէն աւելի շահաբաժինները: Ապահովագրեալներուն արդէն վճարած է կամի նպաստ իրենց գումարած է 3 ՄԻԼԻԱՐ 480 ՄԻԼԻՕՆ որ գրեթէ՛ աշխարհի ուրիշ որ եւ է ընկերութեան մէկ միլիար աւելի է: Ս. ԼԷՈՆԱՐ ընդհանուր ներկայացուցիչ ի Գահիրէ:

Աշխարհի մէջ գտնուող ուրիշ որ եւ է ընկերութեան աւելի երաշխաւորութիւններ, ընդարձակ գործառնութիւններ եւ հրապարակի վրայ աւելի ապահովագրութիւններ ունի եւ աւելի ապահովագրին կը գանձէ: ԱԼԷՔՍԻՍ ԼԱՎԻՉՕՆ գլխաւոր գործ. յ'Ալեքսանդրիա:

Անտոյ հաշուելով այն քաղաքներն որոնք առ նուազն 100,000 բնակիչ ունին Բրոֆ. Աուպար Եւրոպայի մէջ կը գտնէ, Գերմանիոյ մէջ՝ 29 քաղաք (որք առնուազն 100 հազար բնակիչ ունին), Աւստրո-Հունգարիոյ մէջ 6, Պելճիոյ մէջ՝ 3, Սպանիա՝ 6, Ճրանսա՝ 12, Յունաստան՝ 1, Բրիտանական կղզիներն՝ 34, Իտալիա՝ 12, Նորվեգիա՝ 1, Սաարին-Նահանգներն՝ 3, Փորթուգալ՝ 2, Ռումանիա՝ 1, Ռուսիա՝ 16, Շուէտ՝ 2, Զուիցերիա՝ 1 և Թուրքիա՝ 1:

Ռեքիչ ցուցակ մ'ալ մեզ կ'իմացնէ թէ Գերմանիոյ մէջ կան 37 քաղաքներ որոնք 30,000 բնակիչէ աւելի ժողովուրդ ունին, Աւստրիոյ մէջ՝ 18 քաղաքներ, Պելճիոյ մէջ՝ 10, Ի Սպանիա՝ 18, Ի Ճրանսա՝ 34, Ի Յունաստան՝ 3, Ի Բրիտանական կղզեաց մէջ՝ 67, Իտալիա՝ 27, Ի Նորվեգիա՝ 2, Սաարին-Նահանգաց մէջ՝ 8, Ի Փորթուգալ՝ 2, Ի Ռումանիա՝ 4, Ի Ռուսաստան՝ 30, Ի Սերպիա՝ 1, Ի Շուէտ՝ 3, Ի Զուիցերիա՝ 4: Ուրեմն Եւրոպայի մէջ կան 308 քաղաքներ որոնք ամենքն միասին 36 և 1/4 բնակիչ ունին, այսինքն բոլոր բնակչութեան 13 0/0ը:

Ինչպէս նշմարել կուտայ հեղինակը, այս դարու կէզէն յետոյ քաղաքներու բնակչաց թիւն շատ զգալի կերպով աւելցեր է, և ատոր պատճառը ոչ թէ ծնունդներու բազմանալն է, այլ դաշտային բնակչաց դէպ ի քաղաք գաղթելը: 1870 էն մինչև 1897 — դիցուք 23 տարիէն մի քիչ աւելի — Եւրոպայի մէջ 30,000 բնակչօք քաղաքներու թիւը զգալապէս մեծցեր է 171էն 308ի բարձրանալով: Այս քաղաքներու բոլոր բնակչութիւնը կը ներկայացնէ Եւրոպայի ամբողջ ժողովրդին 0/0 13ը, մինչ 1870 թուականին միայն 0/0 9ը կը ներկայացնէր:

ԶՈՒԱՐՃԱԼԻՔ

Երիտասարդ մը, ողորմելի կերպիւ հազուած, անցորդի մը կը մտնեայ և օգնութիւն կը խնդրէ,

— Անելի լաւ կը լինի եթէ աշխատիք, կ'ըսէ անցորդը:

Յայնժամ, մուրացկանը, հպարտօրէն. — Պարո՛ն, ձեռնէ խնդրածս խրատ չ'է այլ... դրամ:

ՏՕՐՈՒՅՐ ԺՕՐԺ Փ. ԷՎԼԻԵԱՆ  
Ամերիկեան Աջակցութիւն  
Ապրիլ 26-ի Գուպրի թիւ 55

Կը պատրաստէ ամեն բերաններու և հասակի յարմար ընտիր ապրանքներով կեղծակաւներ:


Կը դադրեցնէ վայրկեանապէս ակուայի ցաւերը, ամերիկեան նորագոյն մեթոտով իւր պատրաստած դեղերով:

Կը բուժէ լինտերու և բերնի ամեն տեսակ հիւանդութիւններն:

Իր լեցուցած ակուաներուն տեղուում թիւնն առ նուազն երկու տարուան համար կ'երաշխաւորէ:

Վկայեալ աղբատներու ձրի դարմանում, ամէն օր կէսօրէ ետք ժամը 3—5:

ՎԱՅԱՌԱՏՈՒՆ ԹԷՅԻ  
Գ ԻՍԱԳՈՒԼԵԱՆ ԸՆԿ  
ՇԱՐԷ-ԱՊՏԻԻԼ-ԱՉԻՉ



Թէյի գործածութեան նշեգրաններու լոճի, թէյի ճաշակն ևս նրբացած է. որով թէյի առևտուրն վաճառականութենէ աւելի արուեստ մըն է որ միայն երկարատև և ճոխ առևտուրէ յառաջ եկած փորձառութեամբ կ'ստացուի:

Մեր սուննի որ արդէն հանրածանօթ է իր քսանամեայ գոյութեամբ և ընդարձակ գործառնութեամբ, այս տարի ևս իր մասնաւոր գործակալաց ձեռամբ գրած է բազմազան և մեծաքանակ ընտիր թէյից 21-ՆՍՍՍՆԻ, ՃՍՎԱՅԻ, ՍԷՅԼԱՆԻ և ՀՆԻԿՍՍՍՍՆԻ գլխաւոր արտադրիչներէն, որոցմէ արդէն հառած է մեզ. ինչպէս նաև ձրմեռական եղանակի յարմար թէյեր, որոնք իրենց գերնտիր հոտաւետութեամբ ամեն ճաշակի յարմար ըլլալով հանդէպ, գներու ՉԱՓԱՉԱՆՑ աժանութեամբ ալ ամեն քսակի դիւրամատելի են:

Թէ Կ. Պօլսոյ և գաւառաց, և թէ օտար երկիրներու մէջ մեր տան ցոյց տրուած վատահոնութիւնն մը քաջալերէ մեզ, առաւել ևս յարիւ մեր սկզբունքին որ է՝

Ուղղամտութիւն Թէյերու սնակի, կօմի  
և զճոց մտօն:

Մեծաքանակ թէյ փոքրաքանակ մեղի եղած ԿՍՆԻԹԻՅԻ դրամով յանձնարարութիւնք փութով կը կատարուին:

14 — 30

ՀԵԼՎԱՆԻ ՎԻՃԱԿԱՅԱՆՈՒԹԻՒՆ

ԿԻՐԱԿԻ 4 ՓԵՏՐՈՒՄ 1900

Ա. Թիւ	4279	չահած է	Պրանք	1000
Բ. "	863	"	"	200
Գ. "	9660	"	"	100
Դ. "	3396	"	"	30
Ե. "	4394	"	"	30

Հետեւեալք 23 ական ֆրանք կը շահին

7904	3476	1338	9007	8330	1444
4497	8878	3733	2184	3213	2879
7871	6471	3077	7689	3245	8624
	1397	3422	7327	1016	

ԻՄՆՈՒԹ. — Այն շահող թիւերը որոց վիճակեալ պարգևներն ութը օրէն չեն գանձուիր, լնկերութեան անտուկին սեփականութիւնը կը լինին:

Տպագրութիւն Ա. Ա. ԴԱՐԻՆԵԱՆ

ԿԱՐԵՒՈՐ ԱՉԻ

Ամենակալուկ ստամբա ունեցողներուն համար:

Մի՛ ուտէք երբէք այն հացերէն, որոնք զուրկ են փորձառու և վարպետ հացագործի մը միջոցաւ պատրաստուած ըլլալու առաւելութիւններէն:

Երբ մեր ամեն օրուան կերած հացերը լաւ եփուած տեսակէն չեն, դժուարամարսութիւն կը պատճառեն և հետեւաբար շատ մը հիւանդութեանց ենթակայ կընեն զմեզ:

Այս հիւանդութիւններէն և հետեւաբար բժշկաց յաճախ այցելութիւններէն ազատ մնալու միակ միջոցն է՝ դիմել

ԵԿԱՒՅԵՒ ԵՒ ԸՆԿ

ՀԱՅՎԱԶԵԱՆ ՓՈՒՌԸ

Օրօգրի Պաֆ վաճառատան մօտերը, Կապի-Էր-Պենաֆի 6իցս դիմացը

ԵԿԱՒՅԵՒ ԵՒ ԸՆԿ. բազմաթիւ նորանոր յաճախորդներէ գտած ընդունելութիւններէն քաջալերուած, պատիւ ունին յայտարարելու թէ՛ իրենց փուռին մէջ պատրաստուած ընտիր հացերը զուտ և անխարդախ ալիւրէ պիտի ըլլան Վիշու:

ԵԿԱՒՅԵՒ ԵՒ ԸՆԿ. թեան փուռին մէջ զաղդիական, անգղիական, գերմանական և յունական հացեր պիտի պատրաստուին, իրենց տեսակին մէջ անմիջեղի ըլլալու պայմանաւ:

ԵԿԱՒՅԵՒ ԵՒ ԸՆԿ. ամենամեծ խնամքով պիտի պատրաստեն սուրճի, թէյի և կաթի պարսիմաթներ և այլն:

ԵԿԱՒՅԵՒ ԵՒ ԸՆԿ. թեան եղած յանձնարարութիւնը ամենայն ճշգրտութեամբ և փութով կը կատարուին: 27—30

ՍՏԱՄՆԱՐՈՅԺ

ՏՔ. ՊԵՏՐՈՍ ՆԻԿՈՂԵՍՈՒ

Տոկոս և մարդարտաշար ակուաներու առողջ լինտեր ունենալն ոչ միայն մարդու գեղեցկութեան կը նպաստէ, այլ առողջ կարենալ ապրելու առաջին պայմանն է: Տիար Պետրոս Նիկողեմոս, վկայեալ ատամնաբոյժ, որ երկար ատեն Բարիզու մէջ ատամնաբուժութեամբ զբաղած և արհեստին նորանոր կատարելութեանց խիստ մօտէն հետեւած է, այժմ քաղաքս վերադարձած և էղպեքիյէ մրանսէյ վաճառատան ճիշտ դիմացի արադրուանին մէջ ատամնաբուժական աշխատանոց մը հաստատած է, ուր ամեն օր պատրաստ է իրեն դիմողներն գոհացնել թէ արհեստին յաջողակութեան և թէ գներու յոյժ չափաւորութեան տեսակէտով:

Հինգշաբթի օրերն կէս օրէ վերջ ժամը 3էն 5 ձրի դարմանում: